«ՎԱՆԱՁՈՐԻ Հ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ»

ՀԻՄՆԱԴՐԱՄ

Հավելված
«Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարան»
հիմնադրամի Ռեկտորի ժամանակավոր պաշտոնակատարի
19.05.2025 թ. թիվ 460 Ն/Մ հրամանի

ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

ՎԱՆԱՁՈՐԻ Հ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՄԱԳԻՍՏՐԱՏՈՒՐԱՅԻ ԱՌԿԱ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ 2025-2026 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ

Ընդունված է ՎՊՀ-ի գիտական խորհրդի կողմից
Արձանագրություն թիվ 8 «08». 05.2025թ.

Վանաձոր
2025թ.

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1. Սույն կարգով սահմանվում է «Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի (այսուհետ՝ Համալսարան) մագիստրատուրայի առկա ուսուցման համակարգում 2025-2026 ուսումնական տարվա ընդունելության կանոնակարգը (այսուհետ՝ Կանոնակարգը):

1.2. Սույն կանոնակարգի իրավական հիմքերն են՝ ՀՀ սահմանադրությունը, «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքը, ՀՀ ԿԳ նախարարի 2007 թ. դեկտեմբերի 6-ի թիվ 1193-Ն հրամանով հաստատված «ՀՀ բարձրագույն ուսումնական հաստատություններում մագիստրատուրայի ընդունելության և ուսուցման կարգը», Համալսարանի կանոնադրությունը և այլ իրավական ակտերը:

1.3. Մագիստրատուրայում կարող է սովորել բակալավրի, դիպլոմավորված մասնագետի, մագիստրոսի որակավորում ունեցող անձը մասնագիտական գիտելիքները խորացնելու, վերամասնագիտանալու, ինքնուրույն գիտական ուսումնասիրություններ կատարելու, մասնագիտական, գործնական, նորարարական, տեխնոլոգիական զարգացումների ու նոր հնարավորությունների ընկալման ունակություններ ձեռք բերելու և մագիստրոսի որակավորման աստիճան ստանալու համար:

2. ՄԱԳԻՍՏՐԱՏՈՒՐԱՅԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆԸ, ՄՐՑՈՒՅԹԻ ԱՆՑԿԱՑՈՒՄԸ

2.1. Առկա ուսուցմամբ Համալսարանի մագիստրատուրա մրցութային կարգով կարող են ընդունվել բակալավրի, դիպլոմավորված մասնագետի, մագիստրոսի որակավորում ունեցող ՀՀ քաղաքացիները: Մագիստրոսի որակավորում ունեցող քաղաքացիները երկրորդ մագիստրոսական կրթություն կարող են ստանալ միայն վճարովի հիմունքներով: Օտարերկրյա քաղաքացիները և ՀՀ քաղաքացիություն չունեցող անձինք մագիստրատուրա կարող են ընդունվել միջպետական կամ միջգերատեսչական պայմանագրերի, համաձայնագրերի հիման վրա կամ սեփական նախաձեռնությամբ:

2. 2. Համալսարանի մագիստրատուրայի ընդունելությունն իրականացվում է երկու փուլով:

2.2.1. 1-ին փուլով մագիստրատուրայի ընդունելությունն ըստ մասնագիտությունների անցկացվում է՝ ըստ ՀՀ կառավարության կողմից հաստատված՝ պետության կողմից ուսանողական նպաստների ձևով ուսման վարձի լրիվ փոխհատուցմամբ (անվճար) տեղերի համար:

2.2.2. 2-րդ փուլով մագիստրատուրայի ընդունելությունն անցկացվում է՝ ըստ կրթության պետական կառավարման լիազորված մարմնի կողմից հաստատված ուսման վարձի մասնակի զեղչի կիրառման (վճարովի):

2.3 Համալսարանի մագիստրատուրայի ընդունելության **առաջին փուլն իրականացվում է** ներկայացված փաստաթղթերով և/կամ մասնագիտական ընդունելության քննությունների արդյունքներով անցկացվող մրցույթի հիման վրա:

2.4 Բակալավրի կամ դիպլոմավորված մասնագետի ***տվյալ մասնագիտության տվյալ կրթական ծրագրի, ինչպես նաև մասնագիտական մանկավարժության տվյալ կրթական ծրագրի Համալսարանի շրջանավարտները*** **առաջին փուլի** մրցույթին մասնակցում են նախորդ ուսումնառության ծրագրում ցուցաբերած ընդհանուր առաջադիմության գումարային միջին գնահատականով կամ միջին որակական գնահատականով (ՄՈԳ-ով) կամ մասնագիտական ընդունելության քննությունների արդյունքներով (հիմք է ընդունվում ՄՈԳ-ի կամ քննություն առավելագույն միավորը): ***Այլ բուհերի տվյալ մասնագիտության տվյալ կրթական ծրագրի, ինչպես նաև մասնագիտական մանկավարժության տվյալ կրթական ծրագրի շրջանավարտները*** **առաջին փուլի** մրցույթին մասնակցում են մասնագիտական ընդունելության քննությունների արդյունքներով:

2.5 Բակալավրիատի կամ դիպլոմավորված մասնագետի ***այլ կրթական ծրագրերի շրջանավարտների***

ընդունելությունը **առաջին փուլում** կատարվում է ներկայացված փաստաթղթերով և մասնագիտական ընդունելության քննությունների արդյունքներով անցկացվող մրցույթի հիման վրա:

2.6 Առաջին փուլում **հավասար միավորների դեպքում** մագիստրատուրայի ընդունելության մրցույթն անցկացվում է հետևյալ չափանիշների առաջնահերթությամբ.

2.6.1. նախորդ ուսումնառության ծրագրում ցուցաբերած ընդհանուր առաջադիմության գումարային միջին գնահատականով կամ միջին որակական գնահատականով,

2.6.2. մասնագիտական առարկաներից ցուցաբերած առաջադիմության գումարային միջին գնահատականով կամ միջին որակական գնահատականով,

2.6.3. տպագրված և/կամ տպագրման ընդունված գիտական աշխատությունների, թեզիսների և զեկուցումների առկայությամբ,

2.6.4. ոչ մասնագիտական առարկաներից ցուցաբերած առաջադիմության գումարային միջին գնահատականով կամ միջին որակական գնահատականով:

Հավասար միավորների դեպքում նախապատվությունը տրվում է ուսումնառության ողջ ընթացքում ակադեմիական պարտք չունեցած շրջանավարտներին:

2.7 Առաջին փուլով մագիստրատուրայի ընդունելությունը՝ Կառավարության կողմից հաստատված տվյալ ուսումնական տարվա առկա ուսուցմամբ և պետության կողմից ուսանողական նպաստի ձևով ուսման վարձի լրիվ փոխհատուցմամբ (անվճար) տեղերի համար, իրականացվում է համապատասխան տարվա զորակոչը կազմակերպելու մասին Կառավարության որոշմամբ նախատեսված ժամկետներում, որին կարող են մասնակցել բակալավրիատի կամ դիպլոմավորված մասնագետի կրթական աստիճան ունեցող շրջանավարտները:

2.8. Առաջին փուլի ընդունելության քննությունները կազմակերպվում են 2025 թվականի հուլիսի 1-ից 5-ը ներառյալ (ըստ ժամանակացույցի):

2.9. Անվճար սովորելու համար մրցույթը **(առաջին փուլ)** չհաղթահարած դիմորդները իրավունք ունեն մասնակցել **երկրորդ փուլին** (վճարովի համակարգ) անցկացվող ընդունելության քննություններին: Այս դեպքում տվյալ դիմորդների վերջնական արդյունք է համարվում ստացած ավելի բարձր գնահատականը:

2.10. Առաջին փուլում առաջացած թափուր տեղերը համալրվում են՝ ըստ սույն Կանոնակարգի դրույթների՝ մրցույթի արդյունքներով:

2.11. Մագիստրատուրայի ընդունելության երկրորդ փուլին կարող են մասնակցել.

2.11.1. Առաջին փուլին մասնակցած և անվճար համակարգ չընդունված դիմորդները, որոնք կարող են պահպանել ընդունելության քննության դրական գնահատականը,

2.11.2 Համալսարանի և այլ բուհերի՝ տվյալ և նախորդ ուսումնական տարիների բակալավրիատի շրջանավարտներ և դիպլոմավորված մասնագետներ,

2.11.3. Պարտադիր ժամկետային զինվորական ծառայությունից զորացրված անձինք (անվճար՝ ՀՀ կառավարության կողմից տրամադրված պարտադիր զինվորական ծառայությունից զորացրված անձանց համար նախատեսած անվճար տեղերի տրամադրման դեպքում կամ վճարովի հիմունքներով):

2.12. Երկրորդ փուլի ընդունելության քննություններն անցկացվում են 2025թ. **օգոստոսի 25-ից 28-ը ներառյալ:**

2.13 Երկրորդ փուլում բակալավրի կամ դիպլոմավորված մասնագետի ***տվյալ մասնագիտության տվյալ կրթական ծրագրի, ինչպես նաև մասնագիտական մանկավարժության տվյալ կրթական ծրագրի շրջանավարտները*** կարող են մրցույթին մասնակցել ըստ իրենց նախընտրության կամ նախորդ ուսումնառության ծրագրում ցուցաբերած ընդհանուր առաջադիմության գումարային միջին գնահատականով կամ միջին որակական գնահատականով (ՄՈԳ-ով) կամ մասնագիտական ընդունելության քննությունների արդյունքներով.

2.13.1 նախորդ ուսումնառության ծրագրում ցուցաբերած ընդհանուր առաջադիմությանգումարային միջին գնահատականով կամ միջին որակական գնահատականով,

2.13.2 մասնագիտական դասընթացներից ցուցաբերած առաջադիմության գումարայինմիջին գնահատականով կամ միջին որակական գնահատականով,

2.13.3 տպագրված կամ տպագրության ընդունված գիտական աշխատությունների, թեզիսների և զեկուցումների առկայությամբ,

2.13.4 ոչ մասնագիտական դասընթացներից ցուցաբերած առաջադիմության գումարայինմիջին գնահատականով կամ միջին որակական գնահատականով:

2.14 Երկրորդ փուլում բակալավրիատի կամ դիպլոմավորված մասնագետի ***այլ կրթական ծրագրերի շրջանավարտների*** ընդունելությունը կատարվում է ներկայացված փաստաթղթերով և մասնագիտական ընդունելության քննությունների արդյունքներով անցկացվող մրցույթի հիման վրա:

- Բանավոր քննությունը ձայնագրվում է և ձայնագրությունը պահպանվում է արդյունքները հրապարակելուց 24 ժամվա ընթացքում:
- Քննության բողոքարկման կանոնակարգային պահանջներն են.
- Դիմորդը կարող է քննության գնահատականը բողոքարկել հանձնաժողովի նախագահին ներկայացնելով գրավոր բողոք, որը քննարկվում է նույն օրը:
- Գրավոր բողոքի քննարկումը իրականացվում է բողքարկման հանձնաժողովը, որի կազմը հաստատվում է Համալսարանի ռեկտորի կողմից նախապես:
- Դիմորդիներկայությամբ ուսումնասիրվում և քննարկվում է գրավոր աշխատանքը, իսկ բանավոր քննության դեպքում լսվում է ձայնագրությունը:
- Բողոքարկման արդյունքնում կայացվում է որոշում՝
  ա) գնահատականը թողնել անփոփոխ,
  բ) գնահատականը բարձրացնել,
  գ) գնահատականը իջեցնել:
- Ընդունված որոշման վերաբերյալ կազմվում է արձանագրություն, որը ստորագրվում է հանձնաժողովի նախագահի կողմից:
- Գնահատականի փոփոխության դեպքում կազմվում է համապատասխան արձանագրություն:

2.15 Երկրորդ փուլով մագիստրատուրայի ընդունելության մրցույթն անցկացվում է՝ ըստ Կանոնակարգի 3.13-րդ կետի չափանիշների:

2.16 Այլ մասնագիտություն ունեցող դիմորդների ընդունելությունը կատարվում է նույն մասնագիտությամբ առաջին և երկրորդ փուլերով ընդունելության անցկացումից հետո թափուր մնացած վճարովի տեղերի հաշվին՝ համաձայն Կանոնակարգի 3.14-րդ կետում նշված պայմանների:

2.17 Քննությունների հարցաշարերը հաստատվում են մասնագիտական ամբիոնների կողմից և մինչև **2025թ. մայիսի 30-ը** տրամադրվում են ընդունող հանձնաժողովի պատասխանատու քարտուղարին:

3. ՄԱԳԻՍՏՐԱՏՈՒՐԱՅԻ ԸՆԴՈՒՆՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԸ ԵՎ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՀՐԱՄԱՆԱԳՐՈՒՄԸ

3.1 Մագիստրատուրայի ընդունելությունն իրականացնելու նպատակով Համալսարանի ռեկտորի հրամանով և նախագահությամբ ստեղծվում է ընդունող հանձնաժողով, որում ընդգրկվում են ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտորը, կրթական գործընթացների կառավարման բաժնի ղեկավարը, մասնագիտական կրթական ծրագրերի (ՄԿԾ) կրթական գործընթացը կազմակերպող դեկանները, ընդունելության պատասխանատու քարտուղարը:

3.2 Քննությունների անցկացման նպատակով ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտորի առաջարկով, Համալսարանի ռեկտորի հրամանով ձևավորվում են քննականհանձնաժողովներ:

3.3 Ընդունող հանձնաժողովը մրցույթի հավակնորդների ցուցակներով իրականացնում է մրցույթ արդյունքների հաշվառմամբ՝ ըստ մասնագիտությունների:

3.4 Հանձնաժողովի անցկացրած մրցույթի արդյունքներով դիմորդներն ընդունվում են Համալսարան:

3.5 Ընդունված դիմորդը Համալսարանի ռեկտորի հրամանով կցագրվում է մասնագիտական կրթական ծրագրին, իսկ նրա և Համալսարանի միջև պայմանագրի կնքումից և նրա կողմից ուսման վարձը վճարելուց հետո կցագրվածը Համալսարանի ռեկտորի հրամանով դառնում է մագիստրատուրայի ուսանող:

4. ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՄԱԳԻՍՏՐԱՏՈՒՐԱ ԸՆԴՈՒՆՎԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԴԻՄԵԼՈՒ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ ԵՎ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ

4.1. Համալսարանի կողմից զանգվածային լրատվության միջոցներով տրվում է հայտարարություն ընդունելության մասնագիտությունների, տեղերի և կանոնների վերաբերյալ: Հայտարարությանը կցվում է մագիստրանտի հետ կնքվող պայմանագրի տեքստը:

4.2. Առաջին փուլով մագիստրատուրայի ընդունելության համար դիմումի և փաստաթղթերի ընդունումը կատարվում է 2025 թ. **հունիսի 5-ից հունիսի 27-ը ներառյալ**, երկրորդ փուլով՝ **2025թ. հունիսի 1-ից օգոստոսի 22-ը ներառյալ**:

4.3. Համալսարանի մագիստրատուրայի դիմորդները ընդունող հանձնաժողով են ներկայացնում հետևյալ փաստաթղթերը.

ա) մագիստրատուրայի ընդունելության դիմում-հայտ՝ Համալսարանի ռեկտորի անունով (լրացվում է տեղում),

բ) բարձրագույն կրթության մասին դիպլոմի և նրա հավելվածի բնօրինակները և դրանց լուսապատճենները (օտարերկրյա պետություններում բարձրագույն կրթություն ստացածների համար փաստաթուղթ նրանց կրթության համարժեքության մասին),

գ) տվյալ տարվա շրջանավարտները ներկայացնում են ուսանողի ակադեմիական տեղեկագիրը և տեղեկանք ուսումնական հաստատությունից՝ բակալավրի աստիճանը շնորհելու վերաբերյալ:

դ) ինքնակենսագրություն (CV),

ե) անձը հաստատող փաստաթղթի պատճեն,

զ) 3 լուսանկար (3x4 սմ չափի),

է) հրատարակված կամ հրատարակման ընդունված գիտական աշխատությունների ցուցակ (դրանց առկայության դեպքում):

5. ՄԱԳԻՍՏՐԱՏՈՒՐԱՅԻ ԴԱՍԵՐԻ ՍԿԻԶԲԸ

5.1. Մագիստրատուրայի առաջին կուրսի դասերն սկսվում են 2025թ. սեպտեմբերի 1-ից:

6. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

6.1. Սույն Կանոնակարգը ուժի մեջ է մտնում Ռեկտորի կողմից հաստատվելուց հետո: